469. Տապանաքար, *նույնատիպ. վրան՝ 6 տող.*
ԱՍՏ Է ՈՒՆԻԱ / ԴՈՒՍՏՐՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԽՏՐԵԱՆ / ՎԱԽ. 1885 ԱՄԻ:

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Գրիգոր Լուսավորչի անունը կրող մայր եկեղեցին հիմնադրվել է քաղաքի կենտրոնում 1783 թ. սեպտեմբերի 9-ին ռուսահայոց թեմի հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի կողմից: Կառուցումն ավարտվել է 1807 թ.: Վերակացուն եղել է ղարասուեցի Փանոսի որդի Գասպարը: Տաճարն ունեցել է ռուս-բյուզանդական ոճ, երեք մուտքով՝ արևմուտքից, հարավից և հյուսիսից: Գմբեթը պատրաստվել է չորս մեծամեծ սյուների վրա: Արևմտյան դռան գիմաց կառուցված է եղել գավիթն իր զանգակատնով: Ողջ համալիրը շրջափակվել է երկաթե ցանկապատով: Շինարարության ընթացքում պատերի մեջ ագուցվել են Ղրիմից բերված խաչքարեր: Այս արբատեղին նոր նախիջևանցիների արտաբերությամբ կոչվել է «Ժամի ազպար» (բակ): Այժմ եկեղեցին գոյություն չունի, և նրա երբեմնի արձանագրությունները պրակում զետեղել ենք Ե. Շահազիզի[1] և Ս. Ջալալյանի[2] ընդօրինակություններից:

470. Խաչքար, *ագուցված է եղել եկեղեցու արևմտյան դռան ձախակողմյան պատին, ներքուստ.*
ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ՆՇԱՆՔՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԵՍԻՆ ՊԱՐՈՆ ԻՍՈՒՖԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՆ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ԹՎ[ԻՆ]. ՊՂԱ (1442):

Հրատ. Ջալալյան, Բ, 467, Ե. Շահազիզ, 49

471. Խաչքար, *հարավային մուտքի դռան աջակողմյան պատին, արտաքուստ.*
ՍՈՒՐԲ ՆՇԱՆՔՍ ԲԱՐԵԽՕՍ Է Ս[Ա] ՏԱԹ ԽԱԹ[ՈՒ]ՆԻՆ ԵՒ ԲԱՂԴԱՏ ԽԱԹ[ՈՒ]ՆԻՆ ԵՒ ԻՒՐԵԱՆՑ ՄՕՐՆ ՍՈՎՈՒՆՋ ՄԵԼԻՔԻՆ. ԹՎ. Ջ (1451) ՅՈՒՆՎԱՐԻ Է (7):

Հրատ. Ջալալյան, Բ, 467, Ե. Շահազիզ, 49

472. Խաչքար, *ագուցված է եղել հյուսիսային մուտքի ձախ պատին, արտաքուստ.*
ՅԻՇ. ՍՈՒՐԲ ՆՇԱՆՔՍ ԱՀՐՈՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ ՏՈՆԻԿԻՆ ԵՒ ՆԵՐՍԷՍԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ՝ ՄԱՐԹԱՑ ԽԱԹՈՒՆԻՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴՈՒՆ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ: ԹՎ [ԻՆ]. ՋԼ (1481). ՁԵՌԱՄԲ ՀԱՐԱԿՈԲԻՆ:

Ծանոթ. *Ջալալյանի ընթերցմամբ՝ «ՀԱՅՐ ՅԱԿՈԲԻՆ»:*

Հրատ. Ջալալյան, Բ, 467, Ե. Շահազիզ, 50

473. Խաչքար, *ագուցված է եղել բեմի ճակատին.*
ՍԲ ՆՇԱՆՔՍ ԲԱՐԵԽԱՒՍ Է ՍԻՄԷՕՆ ՔԱՀ[Ա]Ն[ԱՅ]ԻՆ ԵՒ ԻՒՐ ԵՐԷՑԿՆՈՋՆ ԷՄԻՆ ՄԵԼՔԻՆ ԵՒ ԻՒՐԵԱՆՑ ԾՆՈՂ[ԱՑՆ]. ԹՎ. ՋԺԱ (1464) ՁԵՌԱՄԲ Ք[ԱՀԱՆԱ]. ՍԻՄԷՕՆԻՆ:

Ծանոթ. *Ջալալյանի ընթերցմամբ՝* ՁԵՌԱՄԲ ԱԻԵՏԻՔ ԱԲԵՂԱՅԻՆ:

Հրատ. Ջալալյան, Բ, 466, Ե. Շահազիզ, 50

---

1 Ե. Շահազիզ, Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, «Ազգագրական Հանդես», գրքեր 6-7:

2 Սարգիս Ջալալյան, Ճանապարհորդութիւն հ. 2-րդ, Տփղիս, 1858: